

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 21 Յունուարի, 2008

ՀՀՂ Սան Ֆրանցիսկոյի Հայ Դատի Յանձնախումբը որոշել է զօրակցել հայազգի Ջաքի Սփիրի ընտրարշաւին Կոնգրէսի առաջիկայ լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ: Սփիրը նախկինում ընտրուել էր Կալիֆորնիայի նահանգային Սենատի անդամ եւ միշտ նեցուկ կանգնել ամերիկահայութեանը յուզող հարցերին: Նա պաշտօնապէս իր թեկնածութիւնն է առաջադրել Կոնգրէսում Կալիֆորնիայի 12-րդ ընտրատարածքի համար: Կոնգրէսական Թամ Լանթոսը, որ 1980 թուականից ի վեր այդ ընտրատարածքի ներկայացուցիչն է, որոշել է այս տարի ներկայացնել իր հրաժարականը:



Հինգշաբթի, Յունուարի 11-ի երեկոյեան ժամը 8-ին, Հայ Օգնութեան Միութեան Շրջանային Վարչութեան Գլխավոր Կենտրոնատեղիի սրահում տեղի է ունեցել «Համազգային» հայ կրթական ու մշակութային ընկերակցութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան կազմակերպած ամանորեան աւանդական հանդիսութիւնը, որին ներկայ էին Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի, Հայ Օգնութեան Միութեան, Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչները «Համազգային»-ի անդամներ ու բարեկամներ: Միջոցառման բացումը կատարել է հանդիսավար Գեորգ Պետիկեանը, որն անդրադառնալով «Համազգային»-ի առաքելութեանը նշել է, թէ «իր ծննդից ի վեր «Համազգային»-ը մշակութային մեր զանազան ձգտումների թարգմանն է հանդիսացել: «Համազգային»-ը իր մասնաճիւղերով, միաւորներով, թատերախմբերով, պարախմբերով եւ երգչախմբերով ու յատկապէս իր կամաւորների փառանգով մեր բոլորին սրտերի եւ հոգիների մէջ ոգեկան հայրենիքներ է կառուցել»,- ասել է նա եւ յիշեցրել, որ 2008 թուականը զուգահիստում է «Համազգային»-ի հիմնադրման 80-ամեակին եւ այս առթիւ Շրջանային վարչութիւնը ծրագրում է զանազան նախաձեռնութիւններով արժանավայել կերպով յիշատակել պատմական այս թուականը: Հանդիսութեանը ելոյթ է ունեցել նաեւ «Համազգային»-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան ատենապետ Վիգէն Եագուպեանը, որը խօսել է միութեան անցեալ տարուայ աշխատանքների ու ձեռքբերումների մասին:



Հայ Օգնութեան Միութեան Սան Ֆրանցիսկոյի «Կարին» մասնաճիւղի նախաձեռնութեամբ, Երեքշաբթի, 2007 թուականի Դեկտեմբերի 18-ին կէսօրին, «Խաչատուրեան» Հայ կենտրոնի «Սարոյեան» սրահում տեղի է ունեցել Սան Ֆրանցիսկոյի հայ երեցներին նուիրուած ամավերջի ճաշկերոյթ հանդիպումը՝ շուրջ 65 ներկաներով: Ճաշկերոյթին, որն աւանդաբար կազմակերպուում է շուրջ 25 տարուց ի վեր, նաեւ ներկայ էին ՀՕՄ-ի ատենապետուհի Ջիւրի Ջինգիրեանը եւ «Գոռուզեան-Ջաքարեան-Վասպուրական» ազգային վարժարանի տնօրէն դոկտ. Եփրեմ Մեհրանեանը: Ելոյթ ունենալով միջոցառմանը, դոկտ. Մեհրանեանը գնահատել է այս ձեռնարկի կազմակերպիչներին եւ դիտել տուել, որ նմանօրինակ ձեռնարկները նպաստում են գաղութի անդամների համագործակցութեանը:



Յունուարի 3-ին Ֆրեզնոյի քաղաքապետարանի ցուցասրահում բացուել է ամերիկահայ յանրայայտ գրող Վիլեան Սարոյեանի Հայաստան կատարած այցելութիւնների լուսանկարները, որոնք լուսանկարել է Սարոյեանի բառերով,- «Լուսանկարչական խցիկի բանաստեղծ» Պօղոս Պօղոսեանը: Ցուցահանդէսը մաս է կազմում Վիլեան Սարոյեանի ծննդեան հարիւրամեակին նուիրուած միջոցառումներին, որոնք շարունակուելու են 2008 թուականի ամբողջ տարուայ ընթացքում Կալիֆորնիայի նահանգով մէկ: Պօղոս Պօղոսեանի սեւ ու սպիտակ սոյն ցուցահանդէսում ներկայացուել են Վիլեան Սարոյեանի երկու անգամ Հայաստան կատարած այցելութիւնների լուսանկարները:

Լուսանջելոսահայ համայնքում գործող հայրենակցական միութիւնների հետ իր կապերը զարգացնելու եւ ընդարձակելու նպատակով ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային Կապի Յանձնախումբը անցեալ Հոկտեմբերի 17-ին կազմակերպել էր հանդիպում-ընթրիք, որի ընթացքում Հանրային Կապի Յանձնախմբի առաջարկով որոշուեց պարբերաբար հարցազրոյցներ ունենալ յիշեալ միութիւնների պատասխանատուների ու ներկայացուցիչների հետ՝ միութիւնների պատմականի եւ ծաւալած աշխատանքների մասին: Այդ իմաստով հարցազրոյց է կատարուել «Ամերիկահայ մշակոյթի Փերիա մշակութային միութեան» հիմնադիր նախագահ Մասիս Բաղդասարեանի հետ, որն ամբողջութեամբ կարելի է լսել միանալով ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կայքէջին, www.ARF1890.com հասցեով:

Այս լուրերը տրամադրուում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: